

ՓՈՔՐ ԱՍԻԱՆ ՄԻԱՏԱՐՐ ԴԱՐՁՆԵԼՈՒ ԳԱՂԱՓԱՐԸ ԹՈՒՐԲԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Ռեգինա Գալուստյան

XV-XVI դդ. և նույնիսկ դրանից ավելի ուշ թուրքերը չունեին էթնոնիմ, ընդհանուր ազգային ինքնագիտակցություն: Էթնիկական ինքնագիտակցությանը փոխարինում էր կրոնականը: Թուրք ազգին պատկանելու զգացումը զարգացած չէր: Այն փոխարինվում էր օսմանյան պետության և մուսուլմանական համայնքի ղեկավարին՝ սուլթան-խալիֆին հավատարմությամբ¹: Նշենք, որ ընդհուպ մինչև XX դ. սկիզբ, օսմանյան պատմագրությունը գրեթե չէր հետաքրքրվում թուրքերի ծագմամբ: Դրա բովանդակությունը օսմանը ցեղից օսմանյան տերության ծագման և սուլթանական դինաստիայի հետ կապված իրադարձությունների վերապատման մեջ էր²: Թուրքական ազգի, հայրենիքի, միասնական համայնք կազմելու, դրա համար գոհողությունների գնալու տեսական գաղափարներն առկա էին թուրքական վերնախավի³ շրջանում՝ սկսած 1860-ական թթ., սակայն քարոզվում էին հիմնականում գրականության և մամուլի միջոցով: Բացառություն չէին «Միություն և առաջադիմություն» («İttihat ve terakki», երիտթուրքեր) կուսակցության անդամները, որոնք որոշակի ազդակների ներքո սկսեցին ավելի խորությամբ գիտակցել թուրքական ազգին պատկանելու փաստը և, ի տարբերություն նախկին քաղաքական վերնախավերի, դիմեցին գործնական քայլերի՝ այդ գաղափարները հանրության մեջ տարածելու, և բարենպաստ պայմաններ ստեղծեցին՝ դրանք ընդունելու համար: Նշենք նաև՝ որ այդ ազդակներն ավելի շատ արտաքին ծագման էին, քան թե ներքին:

1908 թ. հուլիսին Մակեդոնիայում տեղակայված թուրքական բանակի ստորաբաժանումներն ապստամբեցին և շարժվեցին Կ. Պոլիս՝ սուլթանից պահանջելով վերականգնել 1876 թ. ընդունված, բայց չգործադրված սահմանադրությունը: Տեղի ունեցավ պետական հեղաշրջում, երկրում հաստատվեց սահմանադրական միապետություն, փաստացի իշխանությունն անցավ «Միություն և առաջադիմություն»

¹ Տե՛ս Еремеев Д. Е., *Этногенез турок*, М., 1971, էջ 159, տե՛ս նաև Ronald Grigor Suny, *Writing Genocide: The fate of the Ottoman Armenians, A Question of Genocide: Armenians and Turks at the end of the Ottoman Empire*, ed. by R. G. Suny, Fatma Muge Gocek, Norman M. Naimark, 2011, էջ 32:

² Նույն տեղում, էջ 20: «Օսմանեան տիրապետութիւնը՝ Օսմանեան բառի յատկորոշումովս իսկ յայտնի է որ իշխող Տան տիրապետութիւնն է, և ո՛չ թէ թուրք ժողովուրդի կամ ազգի՝ որ տիրապետուած երկիրներու հետ ո՛չ մէկ առնչութիւն չէ՝ ունեցեր» («Առաջամարտ», 1912, թիւ 32, էջ 1):

³ «Ազգերը, այսպիսով, սահմանվում են կամքի և մշակույթի առումով, բայց միայն ազգայնականության դարաշրջանում: Ազգայնականությունն է ստեղծում ազգեր, այլ ոչ թե հակառակը: Բայց սա չի նշանակում, որ դա (ազգը) պարզապես *միաձող էլիտաների* կողմից առաջ քաշված կոնստրուկցիա է, այն պատմական երևույթի՝ ինդուստրացման անհրաժեշտություն է: Մտածող էլիտաները պարզապես լցնում են (մարմնավորում են) (խնդիրը) այն դատարկությունը, որը պետք է լցվի, ասելով՝ մենք կարիք ունենք ընդհանուր մշակույթի» (Ernest Gellner, *Nations and Nationalism*, 1983, p. 56):

կուսակցությանը⁴: Վերջիններս գտնում էին, որ Օսմանյան կայսրության պետական կարգերի փոփոխությունը կարող էր երկրի հանդեպ վստահություն առաջ բերել արևմտաներկրապական պետությունների մոտ: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, երկրի արտաքին քաղաքական դրության և «հիվանդ մարդու» կարգավիճակի փոփոխություն տեղի չունեցավ: Հեղաշրջումից անմիջապես հետո Ավստրո-Հունգարիան պաշտոնապես հայտարարեց Բոսնիա և Հերցեգովինայի բռնակցման մասին, որը նա գրավել էր դեռևս 1876 թ.: Բուլղարիան հայտարարեց Արևելյան Ռումելիան Բուլղարիայի բուն տարածքին միացնելու և անկախ թագավորություն հռչակելու մասին: Կրետեն միացվեց Հունաստանին⁵: 1911 թ. սեպտեմբերի 29-ին Իտալիան պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը⁶: 1912 թ. իտալացիները ոմբակոծեցին Դարդանեղը և գրավեցին Դոդեկանեսի կղզիախումբը (Էգեյան ծովում)⁷: Հոկտեմբերին Լոզանում կնքված հաշտության պայմանագրով Լիբիան անցավ Իտալիային⁸: Տարածքային այդ կորուստը բուռն արձագանք ստացավ երկրում: Հալիդե Էդիպն իր հուշերում գրում է, որ աֆրիկյան տարածքների կորստի հետևանքով երկրում բոյկոտեցին իտալական ապրանքները. «Ես չեմ գնի իտալական ապրանք: Ես չեմ ուտի մակարոն: Ես չեմ խոսի իտալերեն»⁹, սակայն այդ կորուստը նաև՝ «ստիպեց փողոցում կանգնած մարդուն գիտակցել, որ բարեփոխումները և արևմտականացված Թուրքիայի իդեալն էին բոլոր խնդիրների պատճառը»¹⁰: Արտաքին ճնշումներն ու պարտությունը բազմաթիվ թուրքերի շրջանում առաջացրին օսմանիզմի նկատմամբ հիասթափություն և մղեցին թուրքական ազգի ծագման պատմության եռանդուն ուսումնասիրմանը և թուրքերի մշակութային առանձնահատկությունների վերհանմանը,

⁴ St' u Dadrian V. N., *The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, Berghahn Books, Oxford, 1995, էջ 179:

⁵ Նույն տեղում, էջ 188:

⁶ St' u *История дипломатии: дипломатия в новое время (1872-1919 гг.)*, том II, под ред. В. П. Потемкина, ОГИЗ, Л.-М., 1945, էջ 208: Թուրքիան ռազմատնտեսական տեսանկյունից պատրաստ չէր պատերազմին: Տրիպոլիի յոթիագարանոց թուրքական կայազորի դեմ նետվեց 56 հազար իտալացի՝ զինված հրետանիով, օդուծով, որն այդ ժամանակ առաջին անգամ օգտագործվեց ռազմական գործողություններում: Հարկ է նշել նաև այն, որ տեղի արաբ բնակչությունը թշնամաբար էր տրամադրված թուրքերի նկատմամբ և իտալացիներին ընդունում էր որպես ազատարարների: Պայքարն ընթանում էր Միջերկրական, Էգեյան և Կարմիր ծովերում, որտեղ նույնպես Իտալիան գերիշխող դիրք ուներ (տե՛ս Алияев Г. З., *նշվ. աշխ.*, էջ 211, Zürcher E. J., *Turkey: A Modern History*, I. B. Tauris, 2004, էջ 102):

⁷ St' u Zürcher E. J., *Turkey: A Modern History...*, էջ 106-107, մանրամասն տե՛ս “*The Orient*”, Constantinople, vol. III, No. 17:

⁸ St' u Hall Richard C., *The Balkan Wars 1912-1913: Prelude to the First World War*, Taylor & Francis, 2002, էջ 20:

⁹ Ավստրո-Հունգարիայի կողմից Բոսնիա և Հերցեգովինայի գրավումից հետո էլ օսմանցիները բոյկոտել էին ավստրիական ապրանքները: Նույնը տեղի ունեցավ նաև Տրիպոլիտանական պատերազմից հետո: Ցյուրիխերը նշում է, որ բոյկոտը հետաքրքիր էր նրանով, որ դա քաղաքականության նոր ձևի առաջին օրինակն էր, երբ առաջնորդները փորձեցին համախմբել քաղաքացիական հասարակությունը (տե՛ս Zürcher E. J., *Turkey: A Modern History...*, էջ 104):

¹⁰ Halide Edib, *Memoirs of Halide Edib*, The Century Co., New York, London, 1926, p. 303.

իսկ այդ առանձնահատկությունների բացակայության պայմաններում՝ դրանց հորինմանը և արհեստական ներարկմանը հանրության մեջ:

Իտալա-թուրքական հաշտության բանակցությունները դեռ չավարտված՝ սկսվեց Բալկանյան առաջին պատերազմը. Բալկանյան դաշինքը¹¹ կազմող երկրները՝ Սերբիան, Բուլղարիան, Հունաստանը, Չեռնոգորիան, 1912 թ. հոկտեմբերին պատերազմ հայտարարեցին Օսմանյան կայսրությանը: Երիտթուրքերը քարոզում էին պատերազմի գաղափարը: Թալեաթը Կոստանդնուպոլսում անցկացվող ցույցերի գլխավոր կազմակերպիչներից էր, որի մասնակիցները պահանջում էին պատերազմ Բալկաններում՝ բացականչելով. «Հարձակվե՛ք Ֆիլիպեի (Ֆիլիպպոպոլիս) վրա, հարձակվե՛ք Սոֆիայի վրա»: Ռազմական նախարար Նազըմ փաշան հայտարարում էր. «Պատերազմի հռչակումից հետո մեկ շաբաթ էլ չի անցնի, և օսմանյան դրոշը կծածանվի Ֆիլիպեի և Սոֆիայի վրա»¹²: Պատերազմը, սակայն, այլ ելք է ունենում, և մայիսի 30-ին կնքված խաղաղության պայմանագրով Օսմանյան կայսրության եվրոպական հատվածն անցնում է հաղթողների տնօրինության տակ: Կոստանդնուպոլիսը և նեղուցների ափամերձ շրջանները էնոս – Միդիա սահմանագծով, նախկին Ռոդոսթո – Միդիա սահմանագծի փոխարեն. ահա թե ինչ մնաց Օսմանյան կայսրության եվրոպական հատվածից¹³:

Եվրոպական դիվանագիտության ակտիվ միջամտության արդյունքում բռնկված Բալկանյան երկրորդ պատերազմի (1913-ի հունիսի 29 - օգոստոսի 10) արդյունք հանդիսացող Կոստանդնուպոլսի պայմանագրով Ադրիանապոլիսը¹⁴ և Մալկարան վերադարձվեցին Օսմանյան կայսրությանը¹⁵: Չնայած դրան՝ թուրքերի կրած պարտությունը ծանր էր՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ դա պարտություն էր Բալկանյան քրիստոնյա հպատակ ժողովուրդներից, նախկին

¹¹ Բալկանյան դաշինքի կազմավորման ուղղությամբ տարվող բանակցությունների մասին մանրամասն տե՛ս *История дипломатии*, том II, էջ 222-223, անդամ-երկրների տարածքային պահանջների մասին՝ նույն տեղում, էջ 217-219, ինչպես նաև՝ Hall Richard C., *նշվ. աշխ.*, էջ 11-12:

¹² Akçam Taner, *A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility*, Henry Holt and Company, New York, 2006, p. 85, Акчам Танер, *Турецкое национальное “Я” и Армянский вопрос*, М., 1995, с. 60.

¹³ Թուրքիայից անջատվեցին եվրոպական բոլոր վիլայեթները՝ Սալոնիկը, Արևելյան Ռումելիան, Էդիրնեն, Մոնաստիրը, Շքորթան, Յանինան (տե՛ս *История дипломатии*, том II, էջ 229):

¹⁴ Ադրիանապոլիսը Օսմանյան կայսրության նախկին մայրաքաղաքն էր և սինվոլիկ մեծ նշանակություն ուներ:

¹⁵ St' u Fikret Adanir, *Non-Muslims in the Ottoman Army and the Ottoman Defeat in the Balkan War, A Question of Genocide: Armenians and Turks at the end of the Ottoman Empire*, ed. by R. G. Suny, Fatma Muge Gocek, Norman M. Naimark, Oxford University Press, NY, 2011, էջ 125: Պայմանագրում առկա էր նաև սահմանային բնակչության փոխանակման մասին կետ Օսմանյան կայսրության և Բուլղարիայի միջև, ինչը կառավարության դեպի միատարրություն տանող քայլերից կարելի է համարել:

«ուայայից»¹⁶: Տարածքային կորուստները հսկայական էին¹⁷: Ֆրանսիացի հրապարակախոս Ժակ Կայզերը, անդրադառնալով Տրիպոլիտանական և Բալկանյան պատերազմներին, գրում է. «1911 թ. սեպտեմբերին կար երեք Թուրքիա. Եվրոպական, Ասիական և Աֆրիկյան: 1912 թ. սեպտեմբերին Աֆրիկյան Թուրքիան վերացավ, և մնացին միայն երկուսը: 1913 թ. սեպտեմբերին մնաց միայն մեկը՝ Ասիական Թուրքիան»¹⁸: Թաներ Աքչամը նշում է. «Պատերազմը սկսվեց հոկտեմբերին, և ավերիչ արշավից հետո օսմանցիները կորցրին «հզոր Ռումելիա»-ն՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության գրեթե բոլոր առաջնորդների ծննդավայրը»¹⁹: Դա խոր հոգեբանական ազդեցություն ունեցավ հենց կառավարող կուսակցության պարագլուխների և գաղափարախոսների վրա²⁰ և արտահայտվեց իրենց կայացրած որոշումների, արարքների, ինչպես նաև հետագայի արդարացումների և մեկնաբանությունների մեջ:

Նոր՝ ազգայնական քաղաքականություն և «հայրենիքի» որոնում

1913 թ. գարնանից թուրքական ազգայնականությունը դարձավ *պաշտոնական առաջնահերթություն*²¹: Բալկանյան պատերազմները և եվրոպական շրջանների անջատումը խոշոր ազդեցություն ունեցան կայսրության բնակչության էթնիկ

¹⁶ Տե՛ս Սիմոնյան Հր. Ռ., *Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը*, Երևան, 1986, էջ 231:

¹⁷ Կայսրությունը կորցրեց մոտ 60 հազ. քառ. կմ տարածք՝ 4 մլն բնակչությամբ, ինչը տարածքային կորստից բացի նաև հսկայական տնտեսական հարված էր (տե՛ս Zürcher E. J., *Turkey: A Modern History...*, էջ 108): Երկրի ներքաղաքական տեսանկյունից օգտակար էր ունենալ քրիստոնյա հպատակներ՝ զինձառայությունից ազատված և դրա համար «բեղել ասկերիեն» (bedel-i-askeri) հարկ վճարող: Այս սկզբունքով էր առաջնորդվում Աբդուլ Համիդը ինչպես հայկական վիլայեթներում, այնպես էլ Բալկաններում սլավոնների նկատմամբ (տե՛ս Киракосян Дж., *Западная Армения в годы Первой Мировой войны*, Ереван, изд-во Ереванского Университета, 1971, էջ 33): ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուս իր հուշերում նշում է. «Դարեր շարունակ թուրքերը պորտաբույծների նման ապրել են իրենց լծի ծանրության տակ կքած աշխատատեղ մարդկանց հաշվին: Թուրքերը դաժան հարկեր էին դնում նրանց վրա՝ հասցնելով վերջիններիս ծայրաստիճան չքավորության, տնտեսական կործանման...» (Մորգենթաուս Հ., *Դեսպան Մորգենթաուսի պատմությունը*, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012, էջ 211):

¹⁸ Սիմոնյան Հր. Ռ., *Նշվ. աշխ.*, էջ 232: «18-րդ դարի վերջին Օսմանյան կայսրությունը բաղկացած էր Բալկաններից (այսօրվա Սերբիա, Բոսնիա, Կոսովո, Մակեդոնիա, Ալբանիա, Հունաստան, Բուլղարիա և Ռումինիայի մեծ մասը), Անատոլիայից (ներկայիս Թուրքիա) և արաբական աշխարհի մեծ մասից (ներկայիս Սիրիա, Լիբանան, Հորդանան, Իսրայել, Իրաք, Քուվեյթ, Սաուդյան Արաբիայի մի մասը, Եգիպտոս, Լիբիա, Թունիս և Ալժիր): Իր դոմինիոնների մեծ մասում սուլթանի իրական իշխանությունը շատ թույլ էր, որոշ մասերում գործնականում չկար» (Zürcher E. J., *Turkey: A Modern History...*, p. 9):

¹⁹ Akçam Taner, *Նշվ. աշխ.*, էջ 85:

²⁰ Հալիդե Էդիբի մեկնաբանությամբ իրավիճակը Կոստանդնուպոլսում աղետալի էր. «Ամեն երեկո, երբ ես հիվանդանոցից դուրս էի գալիս, լսում էի թերթեր տարածող տղաներին իրենց հատուկ թողարկումներն ավետելիս, որոնք միշտ պարունակում էին նոր թուրքական աղետ: Պարտված թուրքական բանակի ամայի երթը թշնամի ազգերի միջով, նրա հալածվելը և սովամահ լինելը, ցրտահարվելը, միայն դրա մի քանի անդամների հասնելը մայրաքաղաք թվում էր անվերջանալի մղձավանջ» (Halide Edib, *Նշվ. աշխ.*, էջ 338):

²¹ Տե՛ս Writing Genocide: *The fate of the Ottoman Armenians...*, էջ 33, Akçam Taner, *Նշվ. աշխ.*, էջ 84:

կազմի վրա. գերիշխող տարրն այժմ մուսուլմաններն էին: Պատմաբան Թաներ Աքչամը նշում է. «Թուրքերը, որոնք չէին կարող ասել «ես գոյություն ունեմ» Բալկանյան պատերազմներից առաջ, այժմ կարող էին ասել այդ բառերը և նույնիսկ նախագծել ազգայնացման ծրագիր»²²: Բալկանյան պարտության հետ մեկտեղ պարտություն կրեց պաշտոնական օսմանիզմի²³ դոկտրինան և, ընդհակառակը, ուժեղացավ թուրքիզմը: Երիտթուրքերի գաղափարախոսներից Զիյա Գյոքալփը գրում է, որ Բալկանյան պատերազմների ընթացքում բուլղարացիները ոգեշնչվում էին իրենց ավանդույթներով, իսկ իրենք՝ «սառը օրենքներով և կանոններով», արդյունքում՝ պատմությունը հաղթեց աշխարհագրությանը: Դա շտկելու համար նա կոչ էր անում սկսել ճանաչել թուրքերին՝ նրանց ծագումից սկսած²⁴: Ի հավելումն, նա հայտարարում էր, որ օսմանիզմի այն դրույթը, համաձայն որի կայսրության բոլոր ժողովուրդները կազմում էին մեկ ազգ, չի համապատասխանում իրականությանը, քանի որ «այդ մարդկային հավաքականության մեջ առկա էին մշակութային առումով անկախ ազգություններ»²⁵:

Բանաստեղծ Յահյա Քեմալը պատմում է. «Ես Փարիզում ուսանողական միտինգների էի գնում: Բալկանյան պատերազմի նախօրեին մեր ազգային փոքրամասնությունները՝ հույները, բուլղարները... մեծ հանրահավաքներ էին կազմակերպում: Այդ ժամանակ մեր երիտթուրքերն էլ Աբդուլ Համիդի տապալումով էին զբաղված: Նրանք թուրք ազգից, բանից տեղյակ չէին: Տեսա, որ հույները, բուլղարները ցանկանում էին տապալել ոչ թե Աբդուլ Համիդին, այլ մի ուրիշ բան: Մրանք թուրք ազգին են ուզում տապալել: Ուրեմն թուրք ազգ կոչվող մի բան կա²⁶: Սկսեցի մտածել, թե ինչպիսի ազգ է դա: Ո՞րն է նրա անցյալը: Ես այդ ժամանակ քաղաքական գիտությունների դպրոցում պատմություն էի ուսանում: Թուրք ազգի անցյալն իմանալու համար սկսեցի փորփրել պատմության գրքերը: Ահա, իմ մեջ այսպես ծնվեցին ազգի զգացումն ու ազգայնականությունը»²⁷: Այն, որ թուրքերը պարտություն կրեցին հինգ հարյուրամյակ իրենց գերիշխանության ներքո գտնվող հպատակներից (որոնց անվանում էին «պարտիզպաններ», «խոզարածներ», «ատելի գյավուրներ»)»²⁸, թույլ տվեց կայսրության տարածքում բնակվող ազգությունների

²² Նույն տեղում:

²³ Քաղաքական ուղեգիծ, համաձայն որի՝ Օսմանյան կայսրության բոլոր հպատակները համարվում էին օսմանցի՝ առանց կրոնի և ազգի խտրության: Հետաքրքրական է այն, որ Վանում հրատարակվող «Աշխատանք» թերթը ազգայնական շարժումների ծագումը Օսմանյան կայսրությունում, ներառյալ Բալկանյան պատերազմները, արդյունք էր համարում այն բանի, որ հպատակ ժողովուրդները՝ ««օսմանցի» անորոշ և տարտամ տերմինի շնորհիվ՝ արհամարհած և զրկած գտան իրենց ազգային իրատունքները: «Օսմանցի» ողորմելի կաղապարը չի կարող ճգնել, ոչնչացնել մանր ազգութիւնները» («Աշխատանք», 1913 թ., թիւ 29, էջ 2):

²⁴ Ziya Gokalp, *Turkish Nationalism and Western Civilization*, Columbia University Press, New York, 1959, p. 95.

²⁵ Նույն տեղում, էջ 136:

²⁶ Bunlar Türk Milleti'ni yikmak istiyorlar. Demek Türk Milleti diye bir şey var.

²⁷ Şair ve fikir adamı olarak. Yahya Kemal beyatlı, Ankara, 2008, p. 11.

²⁸ Киракосян Дж., *նշվ. աշխ.*, էջ 51:

քաղաքացիական և օտարման միջոցով կազմել նոր հանրություն՝ թուրք, ինչի համար անհրաժեշտ էր տարածք, որը պետք է «հայրենիք» հանդիսանար այդ հավաքականության համար²⁹: Բալկանյան պատերազմներից հետո Փոքր Ասիան՝ «Անատոլիան», և հատկապես «Արևելյան Անատոլիան»՝ Արևմտյան Հայաստանը, նոր նշանակություն ստացան երիտթուրքերի համար: Ջգացումը, որ «Անատոլիան թուրքերի վերջին կանգառն էր», հայրենիք, որը պետք էր պաշտպանել ցանկացած գնով, ընկած էր երիտթուրքերի, այնուհետև քեմալականների Փոքր Ասիան միատարր դարձնելու և այնտեղ միմիայն թուրքերի համար հայրենիք ստեղծելու քաղաքականության հիմքում³⁰: Բալկանյան պատերազմներից հետո Անատոլիայի թուրք գյուղացին դարձավ ընդօրինակման իդեալ. Գյոքավիլը գրում էր. «Մենք ցանկանում ենք, որ մեր երեխաները նմանվեն Անատոլիայի գյուղացուն»³¹:

Հարկ է փաստել, որ Բալկանյան պատերազմները ոչ միայն Փոքր Ասիան միատարր դարձնելու գաղափարի արմատավորման հիմքը հանդիսացան, այլև որոշակիորեն դյուրին դարձրին դրա քարոզումը և իրականացումը: Ջարդված թուրքերի զինվորական գումարտակները վերադառնում էին Փոքր Ասիա՝ մուսուլման փախստականների հետ միասին: Չքավոր դարձած և քաղցած ամբոխն իր դժբախտությունների պատճառ պետք է համարեր ոչ թուրք ժողովուրդներին, «այդպիսին էր պաշտոնական քաղաքականության նպատակը»³²: Իշխանություններն այդ փախստականներին քրիստոնյաների դեմ լարելուց բացի օգտագործեցին Արևմտյան Հայաստանի էթնիկ քարտեզը փոփոխելու նպատակով: Այդ քաղաքականությունը խոր արմատներ ուներ Օսմանյան կայսրությունում: Դեռևս Բեռլինի՝ 1878 թ. պայմանագրից հետո, որն իբր պետք է երաշխավորեր հայերի անվտանգությունը³³, սուլթանական կառավարությունը հայերի թվաքանակը նվազեցված էր ներկայացնում³⁴, Արևմտյան Հայաստանի էթնիկական կազմը փոփոխում էր բռնություններ-

²⁹ St' u Montserrat Guibernau, Anthony D. Smith on nations and national identity: a critical assessment, *Nations and Nationalism* 10 (1/2), 2004, էջ 140:

³⁰ St' u Zürcher E. J., *The Young Turk Legacy and Nation Building: From the Ottoman Empire to Atatürk's Turkey*, I. B. Tauris, NY, 2010, էջ 120: Ինչպես Սապահ-Գուլյանն է իրավամբ նշում. «Հայաստանը իր աշխարհագրական դիրքով Թուրք պետական, կայսերական, բերդի դռնն է կազմում: Հայաստանը ունենալով՝ Օսմանցին բերդի բանալին իր ձեռքն ունի, իսկ առանց նրան՝ նա ոչ միայն ամրոցի տերը չէ, այլ այդ ամրոցը գոյություն չի ունենալ չի կարող, ինչքան էլ որ նա փոքր ծալի վերածուկը: — Կ. Պօլսի փականքը Հայկական բարձունքների վրայ պիտի որոնել» (Սապահ-Գիլյան Ս., *Երիտասարդ Թուրքիա*, Պարիզ, 1908, էջ 50):

³¹ Ziya Gokalp, *նշվ. աշխ.*, էջ 244:

³² Киракосян Дж., *նշվ. աշխ.*, էջ 51: «Հարյուր տարվա ընթացքում սեփական կայսրության արագ փլուզումը, Օսմանյան կայսրությունից դուրս գալուց հետո նոր պետությունների՝ Հունաստանի, Սերբիայի, Բուլղարիայի և Ռումինիայի ստեղծումը, այն ակնառու փոփոխությունները, որոնք որ տեղի ունեցան այդ հետամնաց տարածքներում թուրքական լուծը թոթափելուց հետո, է՛լ ավելի սաստկացրին օսմանցիների ատելությունն «անհավատների» հանդեպ...» (Մորգենթաու Հ., *նշվ. աշխ.*, էջ 212):

³³ Կիրակոսյան Ջ. Ս., Սահակյան Ռ. Գ., *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)*, Եր., 1972, էջ 128:

³⁴ «Հայերը, իբրև հպատակներ, զանազան հարկեր են վճարում... պակասեցնել հայերի թիվը — կընշանակէ նրանցից ստանալիք հարկի քանակն էլ նազեցնել... և սհա նորից օգնութեան է հաս-

րով և ջարդերով³⁵ արտասահմանյան նոր միջամտությունը չեզոքացնելու նպատակով: Նման քաղաքականությունը սովորական էր Օսմանյան կայսրությունում և կատարվում էր քրիստոնեաբնակ բոլոր շրջաններում: Օրինակ, 1911 թ. երիտթուրք պարագլուխներից դոկտոր Նազըմը Իթթիհադի կենտրոնական կոմիտեի հաստատմանը ներկայացրեց Մակեդոնիան աստիճանաբար բռնիացի մուսուլմաններով բնակեցնելու ծրագիր³⁶: Պարտությունը Բալկանյան պատերազմում խանգարեց դրա գործադրմանը: Այնուհետև օրակարգ մտավ Արևմտյան Հայաստանի էթնիկ կազմն արհեստականորեն փոփոխելու ծրագիրը՝ Բալկաններից ներգաղթած մուսուլմաններին՝ մուհաջիրներին այնտեղ տեղաբաշխելով: Վահան Մինախոյանը, հետագայում Հայաստանի Առաջին հանրապետության խորհրդարանի անդամ, փաստում է իշխանությունների կողմից մուհաջիրներին դեպի հայկական վիլայեթներ ուղղորդելը: Նա գրում է. «Թուրքական փախստականները Բալկանյան պատերազմների արդյունքում վերադառնում էին «տուն»՝ արյունաթաթախ, ոտքով, ծանր բեռով և կորացած մեջքով: Վերադառնում էին չարությամբ և վրեժի ծարավով: Ո՞ւմ դեմ: Ամբողջ աշխարհի դեմ, քրիստոնեության դեմ: Եկան Կոստանդնուպոլիս, նրանց վտարեցին, եկան Սմիռնա, վտարեցին, և ահա նրանք Հայաստանում են»³⁷: 1913 թ. ընթացքում Ասիական Թուրքիա էր անցել 250.000 փախստական Բալկաններից, որից 150.000-ը հաստատվել էր Արևմտյան Հայաստանում: Երիտթուրքական կառավարությունը ստիպում էր հայերին իրենց հողերի և ունեցվածքի մի մասը զիջել ներգաղթյալներին³⁸: 1913 թ. հուլիսի 3-ից 24-ը Կոստանդնուպոլիսի դեսպանաժողովում ներկայացված բարենորոգումների ռուսական ծրագրում, որը հենված էր 1895 թ. Մայիսյան բարենորոգումների և Կոստանդնուպոլիսի Հայոց պատրիարքարանի ծրագրերի վրա, հատուկ կետ էր մտցված մուհաջիրներին հայկական նահանգներում բնակեցնելու արգելքի մասին, ինչը խիստ ընդդիմության հանդիպեց հատկապես Գերմանիայի կողմից, որպես մուսուլմանների և հայերի համար Հայաստանում բնակության վայրի ազատ ընտրության

նում թիրքական հնարագիտությունը: Մի ակնթարթում... իրականությունը փոխվում է. հայաբնակ վայրերը լայնանում են, հայ ազգաբնակչությունը աճում-մեծանում, մեռածները կենդանանում, չծնւածները ծնւած համարում: Բայց եթէ այդ նոյն թոպէին դիպլոմատիական մի հարց ծագէ հայերի քանակի մասին, մի որևէ ակնարկ լինի բարենորոգումներ մտցնելու առիթով – Ելդըզը իսկոյն սև քօղի տակ կծածկէ վերոյիշեալ փաստը և նորից հրապարակ կհանէ նախորդ փոքրիկ ու ողորմելի թերը» (Թովչեան Ե., *Երիտասարդ Թիւրքիան և հայերը*, մասն առաջին, Թիֆլիս, 1909, էջ 216):

³⁵ Տե՛ս Киракосян Дж., *նշվ. աշխ.*, էջ 37:

³⁶ Տե՛ս Авакян А., *Геноцид армян: механизмы принятия и исполнения решений*, Музей-институт геноцида армян, Ереван, 2013, էջ 49:

³⁷ Алиев Г. З., *նշվ. աշխ.*, էջ 194:

³⁸ Տե՛ս Մինոնյան Հր., *1912-1913 թթ. Բալկանյան պատերազմները և հայերը*, Երևան, 2014, էջ 457: Մի ֆրանսիացի դիվանագետի տված հարցազրույցում Ավստրո-Հունգարիայում Օսմանյան կայսրության դեսպան և նախկին մեծ վեզիր Հիլմի փաշան գաղթականների վերաբնակեցման հավանական վայր է առաջարկել «Ադանայի շրջանը, որն այնքան բերրի է, որ նման է մի փոքրիկ Եգիպտոսի» (Kévorkian Raymond, *The Armenian Genocide. A Complete History*, I. B. Tauris, London, New York, 2011, p. 141):

հավասար իրավունքի խախտում³⁹: Պատրիարք Հովհաննես Արշարունին պարբերաբար բողոքներ էր ներկայացնում Բարձր Դռանը՝ հիշեցնելով, որ կան պետական ազատ հողեր, որոնք կարելի էր բաժանել մուսուլման գաղթականներին և նրանց համար պայմաններ ստեղծել⁴⁰, սակայն այդ բողոքները որևէ արդյունք չէին ունենում: Բալկանյան փախստականների վերաբնակեցման ծրագրի նպատակը մուսուլմանական տարրի ուժեղացումն էր կայսրության արևելյան վիլայեթներում՝ «անբարեհույս» հայկական տարրը դուրս մղելու միջոցով⁴¹: Հետագոտողներ Թ. Աքչամը և Է. Ցյուրխերը փաստում են, որ այս կետը որոշիչ էր, քանի որ այս մուսուլման ներգաղթյալները կստանան անմիջական դեր հետագա Հայոց ցեղասպանության իրագործման մեջ⁴²:

Փոքր Ասիան միատարր դարձնելու գաղափարի ծագումը

Բալկանյան պատերազմից հետո երիտթուրքերի շրջանում տիրապետող էր դառնում այն տեսակետը, որ եթե ժամանակին իրենց նախնիները ձուլած լինեին Բալկանների քրիստոնյա բնակիչներին, ապա այդ տարածքներն այժմ կգտնվեին Օսմանյան կայսրության կազմի մեջ: Այդ գաղափարի առկայությունն իր հուշերում փաստում է նաև Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն (1913 - 1916 թթ.)⁴³: Թուրքիզմի հայտնի գաղափարախոսներից Ջելալ Նուրին 1912 թ. հրատարակած «Օսմանյան անկման պատմությունը» գրքում նույնպես նշում է, որ դրա մեջ էր կայսրության փրկությունը, սակայն խոստովանում է, որ ավելի քան կես հազարամյակի ընթացքում թուրքերին չի հաջողվել ձուլման միջոցով կայսրությունը միատարր դարձնել, հետևաբար ձուլումը չի կարող ազգային-էթնիկական միատարրության հասնելու միջոց լինել: Նման միջոց չէին կարող լինել նույնիսկ զանգվածային հաշվեհարդարները, ինչպես օրինակ՝ համիդյան կոտորածը: Հետևաբար կա միայն մի ճանապարհ՝ Փոքր Ասիայում դիմել այլազգիների՝ հույ-

³⁹ Վանգենհայրը Բեթման Հովվեզին, 14 հուլիսի, 1913 թ., № 21, *Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы Политического архива министерства иностранных дел кайзеровской Германии*, отв. ред. Микаелян В. А., Ер., 1995, էջ 95:

⁴⁰ Տե՛ս Միմոնյան Հր., 1912-1913 թթ. *Բալկանյան պատերազմները և հայերը...*, էջ 458:

⁴¹ Տե՛ս Алиев Г. З., *նշվ. աշխ.*, էջ 194:

⁴² Տե՛ս Akçam Taner, *նշվ. աշխ.*, էջ 87, Zürcher E. J., *Turkey: A Modern History...*, էջ 117: Մուհաջիրների հայկական նահանգներում բնակեցնելու վերաբերյալ տազնապի մասին մանրամասն տե՛ս «Աշխատանք»-ի (1913, թիւ 43) «Տազնապը անցաւ, բայց պատճառները կը մնան», ինչպես նաև «Առաջամարտ»-ի (1912, թիւ 31) «Պատերազմի արդիւնքէն վրդովուած վրէժ կուզեն լուծել հայերէն» հոդվածները:

⁴³ «Երիտթուրքերը գտնում էին, որ երկրի թուրքացումը պահանջում էր բոլոր քրիստոնյաների՝ ասորիների, հույների և, իհարկե, հայերի բնաջնջում: Որքան էլ նրանք հիանալիս 15-16-րդ դդ. մահմեդական զավթիչներով, այնուամենայնիվ նրանք ճակատագրական մեկ սխալ էին գործել. նրանք կարող էին ոչնչացնել երկրի ողջ քրիստոնյա բնակչությանը, սակայն չեն արել: ...Եթե այդ ցեղապետերը Բուլղարիան զավթելուց հետո արի քաշեին բոլոր բուլղարացիներին և Բուլղարիան բնակեցնեին մուսուլման թուրքերով, հիմա բուլղարական խնդիր այլևս չէր լինի...իսկ եթե նրանք ոչնչացնեին նաև ռումինացիներին, սերբերին և հույներին, ապա այն գավառները, որ այժմ բնակեցված էին այդ ազգերով, մինչ օրս էլ կլինեին սուլթանի տիրոջանի անբաժան մասը» (Մորգենթաու Հ., *նշվ. աշխ.*, էջ 219):

ների, ասորիների, հայերի արմատական բնաջնջմանը⁴⁴: Աստիճանաբար արմատավորվում էր այն մտայնությունը, որ եթե թուրքերը ցանկանում են փրկվել վերահաս կործանումից և գոյատևել, ապա միայն մի միջոց գոյություն ունի՝ «Արևելյան Անատոլիայի» լիակատար թրքացում՝ բնիկ ժողովուրդներին ոչնչացնելու միջոցով:

Պատմաբաններ Ուդուր Ումիթ Ունգորը և Մեհմեդ Փոլաթելը, ուսումնասիրելով Հայոց ցեղասպանության ընթացքում հայերի ունեցվածքի բռնագրավման հիմնախնդիրը՝ որպես ցեղասպանության իրականացման դրդապատճառ, այնուամենայնիվ, գալիս են այն եզրակացության, որ երիտթուրքերի համար Հայկական հարցն ազգային հարց էր և ոչ թե տնտեսական: Նրանք փաստում են, որ եթե հայերի կապը «Անատոլիային» պայմանավորված էր նրանց սեփականությամբ, ապա այդ կապը կտրելու համար հարկավոր էր յուրացնել նրանց սեփականությունը, այլ կերպ ասած՝ «երիտթուրքերի քաղաքականության օբյեկտը ոչ թե ունեցվածքն էր, այլ ժողովուրդը»⁴⁵, ավելի ստույգ՝ հայ ժողովուրդը, որը սեփականությամբ կապված էր նոր թուրք ազգի ապագա «հայրենիքի»՝ Փոքր Ասիայի հետ:

Նշենք, որ դեռևս 1911 թ. սկսեցին ծաղկում ապրել մի շարք թուրքական և պանթուրքական կազմակերպություններ, որոնք էլ, գործելով ընդհատակյա կամ բացահայտ, կդառնան Հայոց ցեղասպանության կազմակերպիչներն ու իրականացողները: Թուրքական ազգայնական գաղափարախոսության ձևավորման մեջ մեծ դերակատարում ունեցավ 1911 թ. լույս տեսնող «Genç Kalemler» պարբերականը (Երիտասարդ գրիչներ), որն իր շուրջը համախմբեց թուրք գրողներին: Նույն թվականին Սալոնիկում հիմնվեց «Türk Ocağı» (Թյուրքական օջախներ) կազմակերպությունը⁴⁶: Այն շատ կարճ ժամանակահատվածում ստեղծեց 60 մասնաճյուղեր կայսրության մեջ, ինչպես նաև Կովկասում⁴⁷: Ավելի ուշ՝ 1913-ին, ստեղծված «Türk Gücü»-ն՝ (Թուրքական ուժ) այդ կազմակերպություններից ամենաազդեցիկն էր, որի նպատակն էր «թուրքական ռասան կործանումից փրկելը»⁴⁸: Իթթիհադի կողմից հովանավորվող այս բոլոր կազմակերպությունները կան ստեղծվեցին, կան ակտիվացան 1911 թվականից հետո, երբ երիտթուրքերի IV համաժողովի ժամանակ վերջնականապես հաստատվեց կայսրությունը թյուրքացնելու և մուսուլմանացնելու ծրագիրը⁴⁹: Երիտթուրքերի Սալոնիկյան այդ համաժողովի փաստաթղթերում ասվում էր. «Վաղ թե ուշ պետք է իրականացվի ոչ թուրք տարրերի լիակատար թրքացում: Պարզ է, որ դրան հնարավոր չէ հասնել միայն համոզման միջոցով, պետք է օգտագործել նաև բանակի ուժերը»⁵⁰:

⁴⁴ Տե՛ս Սիմոնյան Հր., *Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը...*, էջ 233, 234:

⁴⁵ Uğur Ümit Üngör, Mehmet Polatel, *Confiscation and Destruction: The Young Turk Seizure of Armenian Property*, London, Continuum, 2011, p. 166.

⁴⁶ Տե՛ս Авакян А., *նշվ. աշխ.*, էջ 29, 30:

⁴⁷ Տե՛ս Halide Edib, *նշվ. աշխ.*, էջ 321, 323:

⁴⁸ Akçam Taner, *նշվ. աշխ.*, էջ 90, տե՛ս նաև Kévorkian R., *նշվ. աշխ.*, էջ 142:

⁴⁹ Տե՛ս Авакян А., *նշվ. աշխ.*, էջ 30:

⁵⁰ Киракосян Дж., *նշվ. աշխ.*, էջ 82, Авакян А., *նշվ. աշխ.*, էջ 43:

Այսպիսով, պարտությունը Տրիպոլիտանական և Բալկանյան պատերազմներում և կրած տարածքային կորուստները թույլ տվեցին երիտթուրք պարագլուխներին Օսմանյան կայսրությունում բնակվող մյուս ազգությունների բացառման և օտարման միջոցով վեր հանել ու պետական քաղաքականություն դարձնել թուրքիզմը, նոր՝ զուտ թուրքական հանրույթ ձևավորելու նպատակով: Դրա իրականացման համար գաղափարախոսներին անհրաժեշտ էր տարածք, որը պետք է «հայրենիք» հանդիսանար այդ նոր ձևավորվող հավաքականության ինքնության կերտման ծրագրում: Նման տարածք ընտրվեց Փոքր Ասիան, մասնավորապես Արևմտյան Հայաստանը: Պարտությունը երիտթուրք գաղափարախոսներին ցույց տվեց նաև, որ դարեր շարունակ վարած ճուրման քաղաքականությունն անարդյունավետ էր Բալկաններում, հետևաբար նաև այդպիսին կլիներ կայսրության մյուս շրջաններում: Այս պարագայում որպես խնդրի (բարենորոգումների միջոցով հայկական վիլայեթների հնարավոր ինքնավարությունը) լուծում էր առաջ քաշվում հայ տարրի ոչնչացումը և մուսուլման ներգաղթյալների միջոցով Արևմտյան Հայաստանի էթնիկ կազմը վերաձևելով այն թուրքական դարձնելը: Բռնկված Առաջին համաշխարհային պատերազմն այդ ծրագիրն իրագործելու համար ստեղծեց միջավայր, իսկ հայերի կողմից բարենորոգումների հարցի բարձրացումը՝ Հայոց ցեղասպանությունը հետագայում արդարացնելու պատրվակ:

ՓՈՔՐ ԱՍԻԱՆ ՄԻԱՏԱՐԻ ԴԱՐՁՆԵԼՈՒ ԳԱՂԱՓԱՐԸ ԹՈՒՐԲԱԿԱՆ
ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Ռեզինա Գալուսյան

ԱՄՓՈՓՈՒՄ

XV-XVI դդ. և նույնիսկ դրանից ավելի ուշ թուրքերը չունեին էթնոսին, ընդհանուր ազգային ինքնագիտակցություն: Թուրքական ազգի, միասնական համայնք կազմելու, հայրենիքի, դրա համար զոհողությունների գնալու տեսական գաղափարներն առկա էին միայն թուրքական վերնախավի շրջանում: Տրիպոլիտանական (1911-1912 թթ.) և Բալկանյան պատերազմներում (1912-1913 թթ.) կրած պարտությունից հետո պաշտոնական օսմանիզմի քաղաքականությունը ձախողվեց, և թուրքական ազգայնականությունը դարձավ *պաշտոնական առաջնահերթություն*: Ուսումնասիրություններ տարվեցին թուրք ազգի ծագման պատմությունը, մշակութային առանձնահատկությունները, հայրենիքը և հայրենասիրության գաղափարները վեր հանելու, իսկ դրանց չլինելու դեպքում՝ հորինելու և հանրությանը քարոզելու ուղղությամբ: Նաև գործնական քայլեր արվեցին՝ այդ «հայրենիքը» հիմնելու համար:

Բանալի բառեր՝ իտալա-թուրքական պատերազմ, Բալկանյան պատերազմներ, թուրք ազգ, «հայրենիք», մուհաջիրներ:

IDEA OF HOMOGENIZATION OF ASIA MINOR IN THE CONTEXT OF TURKISH
IDENTITY CONSTRUCTION

Regina Galustyan

SUMMARY

During XV-XVI centuries and even later the Turks didn't yet form an ethnonym, national self-consciousness. Theoretical ideas of the Turkish nation - united community, homeland, and making sacrifices for the sake of the homeland - existed only among the Turkish elite. After the defeats in the Tripolitanian (1911-1912) and Balkan wars (1912-1913) official policy of Ottomanism failed and Turkish nationalism came on the political agenda. Intellectual circles started research to reveal history of the origins of the Turkish nation, its unique cultural features, ideas of fatherland and patriotism. Not finding such notions, they started to work towards the creation and later propagation of such ideas among the society, which was resulted also in practical steps to establish a "homeland" for the Turkish nation.

The aim of this article is to present the abovementioned developments in the Empire.

Keywords: Italo-Turkish war, Balkan wars, Turkish nation, "fatherland", muhajirs.

ИДЕЯ ГОМОГЕНИЗАЦИИ МАЛОЙ АЗИИ В КОНТЕКСТЕ КОНСТРУИРОВАНИЯ
ТУРЕЦКОЙ ИДЕНТИЧНОСТИ

Регина Галустян

РЕЗЮМЕ

В XV-XVI веках и даже позднее турки не имели собственного этнонима, национального самосознания. Теоретические идеи турецкой нации, объединенной общности, родины и самопожертвования во имя нее, существовали только среди турецкой элиты. После поражения в Триполитанской (1911-1912) и Балканских войнах (1912-1913), официальная политика османизма провалилась и турецкий национализм стал идеологическим приоритетом. Исследования были проведены, чтобы выявить историю возникновения турецкой нации, ее уникальные культурные особенности, идеи отечества и патриотизма, а в случае отсутствия такового, к созданию, впоследствии пропаганде среди общества.

Практические шаги были предприняты на пути к созданию для турецкого народа «родины».

Ключевые слова: Итало-турецкая война, Балканские войны, турецкая нация, "отечество", мухаджиры.